

14 ՈԼՈՐՏ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

Միջազգային դրամատան տարածաշրջանային տնօրէն Ժան Քրիսթֆ Քարիէ վարչապետ Նաուաֆ Սալամի հետ քննարկեց լիբանանեան 14 ոլորտներ բարեկարգելու ծրագրին մանրամասնութիւնները եւ գործադրութեան փուլերը: Ան խոստացաւ շուտով հրապարակել ծրագրին մանրամասնութիւնները, դիտել տալով, որ այդ արդէն իսկ գործադրուած է բազմաթիւ երկիրներու մէջ:

ՀԸՉՊԱՆԼԱ ՍԱԼԱՄԻ ՄՕՏ

Վարչապետ Նաուաֆ Սալամ վարչապետարանի գրասենեակին մէջ ընդունեց Հիւսիսային «Հաւատարմութիւն Դիմադրութեան» խմբակցութեան նախագահ, երեսփոխան Մոհամմատ Ռաատի գլխաւորած պատուիրակութիւնը, որուն



հետ քննարկեց Լիբանանի ընդհանուր վիճակն ու կառավարութեան գործունեութիւնը, ինչպէս նաեւ խորալեւան խախտումները: Ռաատ բարեկամական որակեց Սալամի հետ հանդիպումը, տեղեկացնելով թէ որոշուած է առարկայական եւ խոհեմ լուծում գտնել զենքի թղթածրարին, այնպէս որ Լիբանան պաշտպանուի խորալեւան ոտնձգութիւններէն: Նախագահը շեշտեց, թէ «մեր որոշումները կը կայացնենք քաղաքական գլխաւոր ուժերուն հետ հաղորդակցելու եւ վերականգնումի ծրագիրը արծարծելու միջոցաւ»:

ՊԱՐԵՍԻՆԵԱՆ ԶԵՆԻՆ ՀԱՐՑՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հանրապետութեան նախագահ Ժոզէֆ Աուն Պապատայի պալատին մէջ ընդունեց Լիբանանեան-պաղեստինեան երկ-խօսութեան յանձնախումբի նախագահ Ռամէզ Տիմաշքիէն, որուն հետ քննարկեց նախագահ Մահմուտ Ապպասի հետ



զազաթաժողովին ընթացքին կայացուած որոշումներուն գործադրութեան ծրագիրը: Պապատա այցելեց նաեւ Թուալիի համագործակցութեան կազմակերպութեան ընդհանուր տնօրէնը, որ շնորհակալութիւն յայտնեց յանձնախումբին միանալու Լիբանանի որոշումին առնչութեամբ, պատրաստակամութիւն յայտնելով համագործակցութեան, որպէսզի Լիբանան արագօրէն միանայ յանձնախումբին:

ԲԱՆԱԿԻ ԽՈՒՋԱՐԿՈՒՄՆԵՐ

Լիբանանեան բանակէն ջոկատ մը եւ հետախուզական ծառայութիւնները երէկ խուզարկումներ կատարեցին Պաալ-



պաք քաղաքի Շարաունէ եւ Թել Ապիատ թաղամասերուն մէջ, որոնցով կասկածելիներ եւ արգիլուած միւթեր: Գործողութիւններուն ընթացքին կարելի եղաւ յայտնաբերել եւ գրաւել մեծաքանակ զէնք, զինամթերք եւ արգիլուած միւթեր, մինչ զինեալները կրակ եւ հրթիռներ արծակեցին օդը՝ խափանելու համար խուզարկումները:

ԱՐԲԵՐՈՒ ԳԵՆԱԺԱՄԻ ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆ

Իւրաքանչիւր ամռան սեմին, լիբանանեան զանազան շրջաններու մէջ վերստին կը ցցուի աղբահանութեան ճգնաժամի վտանգը, մանաւանդ այն շրջաններուն մէջ, ուր կը գործեն օրինական կամ ապօրինի աղբավայրեր: Այս ծիրին մէջ, ծանօթ Գոսթա Պրաւայի աղբանոցը հիւրընկալող Շուէֆաթի քաղաքապետութիւնը սպառնաց դիմել մագլցողական քայլերու եւ նոյնիսկ փակել աղբանոցը, եթէ կառավարութիւնը չարքագոյն նախարարաց նախորդ խորհուրդներուն սխալը եւ Շուէֆաթին յատկացնէ 2016-ին խոստացուած յատկացումները: Յայտարարութիւնը յիշեցուց, թէ այս աղբանոցը վնաս կը պատճառէ ոչ միայն Շուէֆաթի մէջ ապրող աւելի քան 600 հազար մարդոց, այլեւ Լիբանանին եւ ամբողջ Միջերկրականի շրջանին, մաղթելով որ հանրապետութեան նախագահ Ժոզէֆ Աունի իշխանութեան օրերուն իւրաքանչիւրը ստանայ իր արդար իրաւունքը:

ԱԼԻ ՀԱՍԱՆ ԽԱԼԻԼ ԼՈՒՍԱՐԶԱԿԻ ՏԱԿ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի օգնական, Ամալ շարժումէն ընտրուած երեսփոխան, նախկին նախարար Ալի Հասան Խալիլ յայտնուեցաւ արդարադատութեան լուսարծակին տակ, երբ անոր եղբայրը ամբաստանուեցաւ կեղծ



դեղորայքի վաճառականութեամբ զբաղելու եւ օրինական ոլորտին 300 միլիոն տոլարի վնաս պատճառելու մէջ: Ալի Հասան Խալիլ մեկնաբանեց թղթարարը եւ պնդեց, թէ որեւէ կապ չունի իր եղբոր եւ անոր նախկին կնոջ վերաբերող թղթածրարին հետ, միւթը որակելով զուտ դատական թղթածրար մը, որ պէտք է ընթանայ իր բնականոն հունով: «Կը շեշտենք դատական բոլոր միւթերը իրենց յարմար տեղը քննարկելու անհրաժեշտութիւնը, հեռու քաղաքական եւ այլ միջամտութիւններէն», ըսաւ Ալի Հասան Խալիլ:

ԱՐԻՏԱՅԻ ԱՆՑԱԿԵՏԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Երէկ առաւօտեան պաշտօնապէս վերստին սկսաւ գործել Լիբանանի հիւսիսային Արիտա սահմանային անցակէտը, որ



կը համարուի Աքքարը Սուրիոյ կապող գլխաւոր անցակէտերէն մէկը: Արիտան խորալեւան հարուածներով կործանուած էր վերջին պատերազմին ընթացքին, սակայն վերականգնումի աշխատանքները վերջերս աշխուժացան անյապաղ վերաբանալու համար սահմանային կէտը: Սուրիոյ ցամաքային եւ ծովային անցակէտերու ընդհանուր խորհուրդը իր կարգին յայտարարեց, թէ հակառակ վերականգնումի աշխատանքներու շարունակութեան, որոշուած է անցակէտը վերաբանալ Միտիայի տօնին նախօրէին՝ դիւրացնելու համար քաղաքացիներուն փոխադրութիւնը:

ԲԱՆԱԿՅԱՅԻՆ ԶԱԽՈՂՈՒԹԻՒՆ

Լաւատեսութեան ալիքէ մը ետք, Ուքրանիոյ դէմ ռուսական պատերազմին եւ Իրանի հիւլէական ճգնաժամին լուծումին միտող բանակցային լաւատեսական յոյսերը անհետացան, փոխարինուելով յոռետեսութեամբ եւ նորանոր սպառնալիքներով: Ռուս-ուքրանական ճակատին վրայ, Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին կարծիք յայտնեց, թէ Քիւեի իշխանութիւնները խաղաղութիւն չեն ուզեր եւ «ուքրանական ոճրագործութիւններուն նպատակն էր ձախողեցնել Իսթանպուլի բանակցութիւնները»: Նշենք, որ ուքրանական հետախուզութիւնը անօդաչուներով լայնածաւալ յարձակում գործեց ռուսական խարիսխներու վրայ, ճիշդ այն ատեն, երբ Իսթանպուլի մէջ կը կայանար ռուսական եւ ուքրանական պատուիրակութիւններուն հանդիպումը: Ուքրանիոյ նախագահ Վոլոտիմիր Զելենսքի միւս կողմէ յայտնեց, թէ բանակցային պատուիրակութիւններու ներկայի կազմով անիմաստ է շարունակել բանակցութիւնը:

Իրանի թղթածրարին հարցով, Իսլամական յեղափոխութեան հոգեւոր գերագոյն առաջնորդ Ալի խամենի յայտնեց, թէ «Միացեալ Նահանգներ պիտի չյաջողի թուլացնել մեր հիւլէական ծրագիրը եւ Թեհրան պիտի չհրաժարի եուրանիւմի հարստացումէն»:

ՀՐԹԻՈՆԵՐ ԿՈԼԱՆԻ ՈՒՂՈՒԹԵԱՄԱՐ

Սուրիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, թէ շարք մը կողմեր կը փորձեն ապակայունութիւն



յառաջացնել Սուրիոյ հարաւային շրջանին մէջ եւ լարուածութիւն հրահրել: Նախապէս, խորալեւան բանակը յայտա-

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ 2024-Ի ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՏՃԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ՝ 2 ԹՐԻԼԻՈՆ 579 ՄԻԼԻԱՌ 200 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ



Հայաստանի Ազգային ժողովին մէջ մեկնարկած՝ 2024 թուականի պետական պիտճէի կատարման տարեկան հաշուետուութեան նախնական քննարկումներուն ելոյթ ունենալով, վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ 2024-ի պետական պիտճէի եկամուտները կազմած են 2 թրիլիոն 579 միլիար 200 միլիոն դրամ:

«Այս թիւն արտայայտում է մեր բոլորի աշխատանքի արդիւնքը՝ վարչապետ, Կառավարութիւն, ԱԺ, Կառավարութեանը ենթակայ մարմիններ, բայց նաեւ քաղաքացիներ: Խօսքը բոլոր քաղաքացիների մասին է: 2024-ին նրանց մի մասն աշխատել է, միւս մասը չի աշխատել: Ի դէպ, ասեմ, որ 2024-ի Նոյեմբերին ՀՀ բոլոր ժամանակների գրանցուած եւ աշխատավարձով ապահովուած աշխատատեղերի բացարձակ մրցանիշ է սահմանուել: Գրանցուել է 782 հազար 832 աշխատատեղ, որը 192 հազար 613-ով կամ 32 տոկոսով ավելի է 2018-ի Նոյեմբերի ցուցանիշից», նկատեց վարչապետը:

«Այսինքն 2018 թուականի յեղափոխութիւնից յետոյ Հայաստանում ստեղծուել է 242 հազար 119 աշխատատեղ, ընդ որում՝ աշխատավարձով ապահովուած: Այս վիճակագրութիւնն աւելի քան վստահելի է: 2018 թուականի Ապրիլին ՀՀ-ում միջին աշխատավարձը եղել է 173 հազար 996 դրամ, 2025 թուականի Ապրիլին՝ 304 հազար 992 դրամ: Միջին աշխատավարձի աճը կազմել է 130 հազար դրամ կամ 70 տոկոս», մանրամասնեց Փաշինեան:

ԱԶՆԻՒՆ ԸՄՅՈՐԴԻ, ՈՒՐԱԽ ԹԷ ՏԵՈՒՐ ԱՌԻԹՆԵՐՈՎ ՔՈՒ ԸՆԶՈՒՆ ՆՊԱՍՏԸ ԲԵՐ «ԱՐԱՐԱՏ»-Ի ԲԱՐԳԱՒԱԾՄԱՆ

ՊԵՂԵԼՈՎ ԱՐԱՐՈՍ-ի ՀԻՆ ՀԱԽԱՔԱԾՈՆԵՐԸ - 33 (55 տարի առաջ՝ այսօր)

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ (Հալեպ)

«ԱՐԱՐՈՍ», 1-6 Յունիս 1970

Հնչակեան կուսակցութեան հիմնադիրները որո՞նք էին։

Հայ իրակամութեան մէջ ամէն ոք չէ որ պիտի կարենայ պատասխանել այս հարցումին։ Ոմանք թերեւս պիտի տան Փարամազի անունը, ուրիշներ՝ Սարգիս Տփրունիի...։

Հարցուն մըն է այս, որ մեզ կը տանի մինչեւ 138 տարի ետ ու մեր դիմաց կը հանէ կովկասահայ սոցիալիստ (ընկերվա-րական) գործիչներու փաղանգ մը։ Այդ գործիչներուն մէջ կայ մէկը, որուն դասական ու շատ ընդհանրացած մէկ դիմանկարը, հինէն իվեր, տպաւորած է զիս։ Արտակարգօրէն առատ եւ ուռած զանգոյր մազերով օծտեալ գլուխ մը, պատկառելի սեփ-սեւ մօրուք մը, պճլտուն աչքեր եւ շղթայէ հնամենի ակնոց մը՝ քիթին վրայ...։ Վիզին ալ՝ լայնաթեւ թիթեռնիկ փողկապ մը...։ Լուսանկարին տակ գրուած է «**Աւետիս Նազարբէկ**»։

1887-ին ժընեւի մէջ կեանքի կոչուած Հնչակեան կուսակ-ցութեան ամենէն երեւելի հիմնադիրն էր Նազարբէկը։ Ծնունդով Թիֆլիսէն էր (1866)։ Կրտուի, թէ ան կը պատկանէր կուսակ-ցութեան ծայրայեղ ծախ (մարքսիստ) թելին, այնքան որ՝ 1933-ին, երբ տարիքը առած էր արդէն, նախընտրեց իր կեանքին վերջալոյսը անցընել Խորհրդային Միութեան մէջ։ Արդէն տարիներ առաջ անդամակցեր էր Կոմունիստ կուսակցութեան։ Գնաց հաստատուեցաւ Մոսկուա ու այնտեղ կնքեց իր մահկա-նացուն ստալինեան դաժան վարչակարգի շուքին տակ, 1939-ին։ Ծանօթ էր նաեւ իբրեւ բանաստեղծ «Լեռնեց» գրչանուումով։ Իր մասին իմ գիտցածը, ընդհանուր գիծերու մէջ, այսքան է։

Բայց ինչո՞ւ յիշատակեցի Աւ. Նազարբէկը։

«**Արարատ**»-ի այս շաբթուան թիւին մէջ արտատպումներ կատարուած են մոսկուաբնակ գրականագէտ ու թատերադէտ փրոՖ. Արշալոյս Արշարունիի յուշերէն, որոնք կը վերաբերին Աւ. Նազարբէկի։

Արշարունի (1896-1985) կը պատմէ որ Նազարբէկին ծանօ-թացաւ 1936-ին, Մոսկուայի Գրողներու տան մէջ։ Բարեկա-մութիւն ստեղծուեցաւ իրենց միջեւ։ Նազարբէկ, իր ռուս կնոջ հետ (ըստ երեւոյթին բաժնուած էր իր առաջին կնոջմէն՝ Մարյոնէ, ու վերամուսնացած -- Լ.Ե.), կը բնակէր խորհրդային մայրաքաղաքի «Յեղափոխութեան վեթերաններու տուն»-ը, պետական հոգաճութեամբ եւ հանգստաւէտ պայմաններու մէջ։ Այդ շրջանին ան արդէն գրած էր եղեր Հնչակեան կուսակցու-թեան պատմութեան Ա. հատորը եւ կուզէր զայն հրատարակել։ Ձեռագիրը յանձներ էր Հայաստանի պատմութեան հիմնարկի մարքսիզմ-լենինիզմի բաժնին։ Բայց գործին հրատարակու-թիւնը կ'ուշանար եւ Նազարբէկ մտաիտզ էր։ «Արդեօք չի՞ կո-րել...», կը մտմտար ան։ Քանի մը տարի անց Նազարբէկ պիտի մահանար։

Անխուսափելի է հարցունը. այդ պատմագիրքը հրատա-րակուեցա՞ւ արդեօք, կամ՝ զոնէ պահպանուա՞ծ է ձեռագիրը, կամ կը տարբերէ՞ր ատիկա Արսէն Կիտուրի երկիհատոր պատմագրքին բովանդակութենէն։ Ո՛վ գիտէ։

Յովսէփ Ս. Պ. Ճիռեան (գրականութեան տոքթոր Սորպոնէն) երկարօրէն դեռերած է ԺԵ.-ԺԶ. դարու իտալացի պետական գործիչ Սաքիավէլիի «Իշխանը» հատորին շուրջ, հոնկէ երեւան բերելու համար որոշ գաղափարներ՝ ի մասին «դիւանագի-տութիւն» ըսուած պետական խորամանկ մտածողութեան եւ գործելաձեւին։

Տեղական գաղութային լուրերէն մէկն է **Լիբանանահայ գրական շրջանակի** ակունքին պաշտօնական բացումը, 23 Մայիսին։ Այս նոր կեդրոնատեղին, որուն վայրը ելեկտրական ընկերութեան դիմացն է եղեր, նախապէս պատկաներ է Վերածունդ միութեան։ Բացման արարողութեան ներկայ եղեր է Խորհրդային Հայաստանի կրթական նախարարի Ա. տեղա-կալ, բանաստեղծ եւ գրող Գուրգէն Բորեան։ Շրջանակին ու ակունքին նախագահը՝ բանաստեղծ Գառնիկ Աղդարեան, ողջուներ է ներկաները։ Թերթը կը հաւաստիացնէ որ «հիմա երբ Գրական շրջանակը կ'օժտուի իր սեփական շքեղ ակունքով, մշակութային գործունէութեան շատ աւելի լայն դաշտեր կը բացուին իր առջեւ»։ Այդ «լայն դաշտեր»-ը, այո՛, տեսանելի մնացին 30-35 տարի, զոնէ մինչեւ 2000-ականներու սկիզբը։ Յետոյ ամայութիւնը, ձեռնբափութիւնն ու ինքնալու-ծարունը բաժին ինկաւ նաեւ Գրական շրջանակին, ինչպէս է պարագան մշակութային մեր կառոյցներէն շատ-շատերուն...։

Այլ լուր մը կը վերաբերի Դպրոցասէր կանանց ընդհանոր միութեան Պէյրութի մասնաճիւղին, որ ճաշկերոյթ մը կազմա-կերպեր է Մայրերու օրուան առիթով, Շիրակ ճաշարանին մէջ։ Խօսք առեր է վարչութեան փոխատենակատուհին տիկ. Արշալոյս Նազարեան։ Բանախօսեր է տիկ. Դաւիթեան։ Յստակ չէ թէ Միութիւնը Փարիզի Դպրոցասէր վարժարանի՞ւ կապուած խմբաւորում մըն է, թէ՞ ոչ։

Չափիկ մէջ բացումը կատարուեր է Հ.Մ.Մ.-ի նոր ակունքին (31 Մայիս), Պէյրութէն ալ համակիրներու մասնակցութեամբ։ Բացման խօսք արտասաներ է Տիգրան Սարաֆեան։ Այնուհե-տեւ սրտի խօսքերով արտայայտուեր են օրդ. Սիլվա Ճերճեան, ընկերներն Աբրահամ Աշըգեան, Գեորգ Տարօնի եւ Գաբրիէլ Մոլոյեան (արաբերէն)։

Հնչակեան կուսակցութեան Լիբանանի ղեկավարները (իրենց տիկիներով) ընթրիքի սեղանի մը շուրջ բոլորուեր են՝ ի պատիւ հայրենի գրող Գուրգէն Բորեանի, Ալ Քասըր ճաշա-րանը (26 Մայիս)։ Բաժապճառէր արտասաներ են ընկերներ Յարութիւն Կուժունի, տոքթ. Արշակ Գաւանճեան, Աւ. Տեմիրճե-եան, Հրանդ Գանգրունի, Պէպօ Սիմոնեան, Տիգրան Սարաֆե-եան եւ Յ. Աբարտեան։ Հայրենի գրողը այդ օրերուն Լիբանան կը գտնուի եղեր՝ ընկերակցելով Հայաստանի պարի պետա-կան համոյթին, որ ելոյթներ տուեր է Փիքատելլի թատրոնին մէջ։

Հայաստանի մէջ իր մահկանացուն կնքեր է դերասանուհի Օլգա Գուլազեան։ Եւ ինչպէս սովորութիւն էր այն ատեն՝ մահագոյծին տակ իրենց ստորագրութիւնը դրեր են Հայաս-տանի Կոմկուսի Կենտրոնական գովիտէն, Հայկական ԽՍՀ Գերագոյն Սովետի նախագահութիւնը եւ Հայկական ԽՍՀ Մինիստրների Սովետը։ Ողբացեալը թատրոնի մեծ վարպետ է եղեր եւ «ժողովրդական արտիստիկ»։

Ամերիկայի «**Երիտասարդ Հայաստան**» թերթը խմբագրա-կանով մը (որ արտատպեր է «**Արարատ**») անդրադարձեր է արտագաղթի աւերիչ հետեւանքներուն։ Թերթը իր մտորումնե-րուն առանցք դարձուցեր է Խորհրդային Հայաստանի առաջին տարիներու ղեկավար դէմը Ալ. Միսանիկեանի մէկ արտայայ-

տութիւնը, որ հետեւեալն է. «Դէպի հայրենիք վերադարձը ապրող հայութեան ամէնօրեայ տիրական մտածումը դառնա-լու է, որպէս ամէնօրեայ աղօթք եւ երազ ամէն գիշերի»։ Մէջբերումին աղբիւրը չէ նշուած։ Սակայն զարմանալի է որ համայնավար բարձրաստիճան գործիչ մը «ամէնօրեայ աղօթք»-ի կ'ականրկէ, երբ գիտենք որ խորհրդային շրջա-նակներու մէջ աղօթք ու եկեղեցի հիմնովին անտեսուած բաներ էին...։

Վախճանեալ **Շաւարշ եպս. Գույումճեանի** մասին վերյի-շումներով լի մահագրական մը ստորագրեր է Կ. Ա. Չալքբեան։ Ան կը պատմէ որ սրբազանից դասընկեր եղած էր Երուսաղէմի ժառանգաւորացին մէջ, 20-ական թուականներուն։ Մատթէոս (սրբազանին աւագանի անունը) պատանի տարիքէն խիզախ ու չարքաշ նկարագիր մը ունէր։ Ուսումնաստենչ էր եւ ունէր լեզուներ սորվելու բնատուր կարողութիւն։ Եւ արդէն, Սրբոց Յակոբեանց վանքին անվերջանալի դատական գործերը անձամբ վերահսկելու նպատակով ՝ հետեւած էր իրաւաբանա-կան ուսման եւ տիրացած փաստաբանի վկայականի...։ Ըստ յօդուածագիրն, Շաւարշ սրբազան ձեռնամուխ եղած էր Օրմանեանի «Ազգապատում»-ին շարունակութեան, սակայն հիւանդութիւնն ու մահը խափաներ էին այդ ծրագրին լրումը (գիտենք, որ աւելի ուշ, Ամերիկայէն Տ. Ջաւէն աւ. քինյ. Արզումանեան ի'նք ձեռնարկեց այդ գործին ու զլուխ հանեց զայն երեք հատորով - Լ. Շ.)։ Կը նշուի նաեւ, թէ «հայութենէ այլասերած երկու սիմլըոր դատարկապորտներ» ոճրափորձ մը կատարեցին սրբազանին վրայ, Դամասկոսի ազգ. առաջ-նորդարանին մէջ։ Եկեղեցական պայքարի տարիներն էին...։

«**Արարատ**» նոր թերթօն մը սկսեր է այս շաբաթ։ «Միոյդ կայծը կամ գաղտնի ոստիկան Վիպեռի յիշատակները»։ Արկածալից վէպ մըն է եղեր իրական կեանքէ։

Այժմ ակնարկ մը նետենք ազգային ծանուցումներուն վրայ։

- **Լիբանանահայ մշակութային միութիւնը**՝ գրական-գեղարուեստական երեկոյթով մը պիտի ոգեկոչէ եղեր ճըլարն Խալիլ ճըլպրանի յիշատակը (իր Ճեսքիվալին առիթով)։ Խօսք պիտի առնեն եղեր Սիսակ Վարժապետեան, Լեւոն Վարդան եւ փրոՖ. Խալիլ Հաուի (արաբերէն)։ Գեղարուեստական յայտազ-րին մասնակցութիւն պիտի բերեն եղեր Յակոբ Կիւլոյեան (ասունկը) եւ տիկ. Ջ. Պուճիգանեան (նուագ)։ Վայր եւ թուա-կան Կոմիտաս սրահ, 2 Յունիս։

-- **Նոր Մերունդ մշակութային միութեան** «Արտաւազդ» թատերախումբը նոր վարագոյր մը պիտի բանայ եղեր՝ բեմ հանելով Դերենիկ Դեմիրճեանի «**Քաջ Նազար**»-ը։ Բեմադրիչ՝ Լուիֆի Թապազեան։ Կարապետ Հաննէսեան, ակնարկի մը մէջ, կը գրէ որ մանուկները շատ տպաւորուեր էին այս փիւտէն։ «**Գրական էջ**»-ն ալ այս շաբաթ իր սիւնակները ամբողջովին նուիրեր է «Քաջ Նազար»-ին։ Արտատպուեր է հատուած մը թատերակէն, ծանօթացուեր է Դերենիկ Դեմիրճեանը կենսագ-րութեամբ ու թատերական իր վաստակով ։

- Անձան եղանակը մեր միութիւնները շարժման անցուցած է։ Եռզդատի եւ **Շրջակայից հայրենակցական միութիւնը** դաշտազնացութիւն մը կազմակերպեր է դէպի ՊիքՖայայի Տահի էլ-Պէպ սրճարանը, Յունիս 7-ին, լման Կիրակի մը հաճելի ժամեր խոստանալով մասնակիցներուն։ Ճիշդ նոյն օրը այլ դաշտազնացութիւն մըն ալ կազմակերպեր է **Համախար-բերողցական միութիւնը**, դէպի Աժալթունի «Քազիօ Ֆլորի-տա» զբօսավայրը։ Իսկ 14 Յունիսին դէպի Հաճ Իլիսի գեղատեսիլ «Քազինօ Համետինա» դաշտազնացութիւն կազ-մակերպեր է Պուրճ Համուտի Հ.Մ.Մ.-Մասիսը։

-- Թեմոր **Խաչիկ Փիլիկեան** դասական երգերու մենա-համերգով մը հանդէս պիտի զայ եղեր «Ջիրիապի 1100-ամեակին առիթով»։ Դաշնակով պիտի ընկերակցի փրոՖ. Միշէլ ՉեքիոնՖ (Ամերիկեան համալսարանի Չէփըլին մէջ, Յունիս 13)։ Հովանաւորներն են Իտալական մշակութային կեդրոնն ու Արաբական մշակութային միութիւնը։ Իդէպ, Ջիրիապ Անտա-լուզի մէջ (Սպանիա) Թ. դարուն ապրած արաբ նշանաւոր երաժիշտ մըն էր։

- **Վահէ Օշական Բ.** մասով մը պիտի շարունակէ եղեր «Արեւմտահայ վէպին ծագումը» խորագրեալ իր դասախօ-սութիւնը, Հայկազեան գոլէճի հայագիտական ամպիոնի ժողո-րդդային լսարանի հեթթական շարքով (3 Յունիս, գոլէճի հանդիսարահը)։

- **Ասահակեան շրջանաւարտից միութիւնը** իր անդամները պտոյտի պիտի տանի եղեր դէպի Դամասկոս (7 Յունիս)։

- Հ.Բ.Ը.Միութեան Լիբանանի Կրթական յանձնախումբը Ալէյի մէջ «Ամառնային վարժարան» մը պիտի բանայ եղեր՝ պրն. Երուսանդ Ակիշեանի ղեկավարութեամբ։ Տեւողութիւնը պիտի ըլլալ երկու ամիս (15 Յուլիս-15 Սեպտեմբեր) ու պիտի դասաւանդուին հայերէն (յատկապէս օտար վարժարան յաճա-խողներու), արաբերէն, անգլերէն եւ թուաբանութիւն։ Օթքարի սպասարկութիւն ալ կայ։

- Պետական երաժշտանոցի երկու հայ ուսուցիչներ՝ ժանթ Գույումճեան-Իլանճեան եւ Կարապետ Չառըրեան հայ երգի համերգով մը հանդէս պիտի գան եղեր Յունիս 6-ին, Գ. Կիւլ-պէնկեան սրահը։

- Հ.Բ.Ը.Մ.-ի Լեւոն Կ. Նազարեան վարժարանի տարեկան քերմէս-պազարը պիտի կայանայ եղեր 7 Յունիսին, դպրոցին «ընդարձակ եւ դալարագեղ պուրակին մէջ»։

ԳՐԾԻ ԱՌԻԹ

Հայ աւետարանական գոլէճը (Հայկազեան համալսա-րանին կից) աշխատանքի կը հրաւիրէ աշակերտ հաւա-քագրողներ (recruiters), որոնք

- Ունին համոզիչ լեզու
- Դիւրահաղորդ եւ ընկերային են
- Կը տիրապետեն կազմակերպչական հմտութիւններու

Հետաքրքրուողներ կրնան իրենց CV-ն ղրկել principal@aecbeirut.edu.lb հասցէին։ Նպատակայարմար նկատուած թեկնածուներուն ժամադրութիւն պիտի տրուի տնօրէնութեան հետ տեսակցութեան համար։

ՍՈՒԿԻ ՔԵՌԻՆ

ՊԵՐՃ ԱՐԱՊԵԱՆ

- Ձեռագործով հագուստ հագած, եկած ես կրթաթռչակի զե՞ղչ ուզելու։ Չենք կրնար տալ։

- Ձեռագործով հագուստս, իմ ձեռքիս գործն է։ Կ'ուզէիք որ անարգէի ձեզ եւ լուացքի հագուստո՞վ գայի։ Լաւ գիտէք որ դերձակուհի եմ, ոչ միայն ձեր դպրոցի հանդէսներուն, այլ շատ մը մայրապետներու տարազներն ալ սիրայօժար, ծրիաբար ես կը կարեմ։

Սրբուհի Ազնէս վարժարանի տնօրէնուհիին՝ մայրապետին եւ մօրս միջեւ եղած խօսակցութիւն մըն է այդ, 1962-ին։ Մեծ քոյրս՝ Անահիտը նոր աւարտած է նախակրթարանը։ Իրենցմով պիտի սկսին միջնակարգ դասարանները, կրկնապատկելով կրթաթռչակները։

Հոս է որ հասած էր Սուկի քեռիին բարերար եւ փրկարար միջամտութիւնը։ Փրկարար, որովհետեւ մեր ընտանիքի երեք զաւակներն ալ ձերբազատուեցան այդ օրերու նեղմիտ, ծայրայեղ եւ մոլեռանդ մտայնութեամբ կրթութիւն ջամբող կաթոլիկ վարժարաններէն։ Երեքս ալ արժանագրուեցանք Հ.Բ.Ը.Միութեան լայնախոհ շրջանակի մը վարժարաններէն ներս։ Անահիտը՝ Դարուհի-Յակոբեան (այդ օրերուն աղչկանց), Հերմիճէն եւ ես՝ Լեւոն Կ. Նազարեան։

Ձոյգ վարժարաններուն տնօրէններն ալ մտերիմ էին Սուկի քեռիին։ Հետեւաբար, իր բարեխօսութեամբ, սկիզբը ունեցանք բաւարար զեղչ, իսկ տարիներ ետք, որպէս փայլուն աշակերտ-ներ, եղանք սան, ուսանելու համար անվճար։

Լուրը տարածուած էր։ Կաթոլիկ երկու վարդապետներ, ժողովրդապետը եւ Մեսրոպեան վարժարանի տնօրէնը ներկա-յացան մեր տունը։ Տէր Կոմես Մայճեան եւ Տէր Մանուէլ Պաթբազեան։ Հազիւ 5-6 տարեկան մանուկ, իրենց այցելու-թեան պատկերը աչքիս առջեւն է տակաւին։

Ձեռչ տալ չուզողները հիմա պատրաստ էին մեր երեքն ալ ծրիաբար ընդունելու։

Ուշ էր արդէն։ Կտուկի կերպով մերժուեցան։

Սուկի քեռին յանձին Սուքիաս Թագաճեանին, բոլորին կողմէ յարգանք վայելող, ազնիւ ոգիով, բարեւիրտ, գիր-գրա-կանութեան նուիրուած, մտաւորական անձնաւորութիւն մըն էր։ Արժանաւոր զաւակը՝ պատմութեան մէջ իր հետքը ձգած գէթունցի Բարդուղիմէոս վարդապետի գերդաստանին։

Ձէթունի ապստամբութիւն-ինքնապաշտպանութեան 1895-ի յաղթանակէն ետք, Թագաճեան վարդապետի դէպի երկինք բարձրացած սուրին տակէն գլխիկոր անցած էին թուրք գերի-ները։

Սուկին երկկողմանի ազգական էր։ Հօրս հօրաքրոջ կողմէ, մօրս՝ մօրեղբայրին։ Իրեն կը պարտիմ գիր-գրականութիւն սիրելու հակումներս։ Կը գմայլէի իր պատէ-պատ գրադարա-նի վրայ։ Կ'երազէի նոյնը ունենալ։

Ամէն առիթի՝ Նոր տարի, վկայական, տարեդարձ, գիրք կամ բառարան կ'ըլլար իր նուէրը։ Մինչեւ այսօր, աւելի քան 65 տարիէ կ'օգտագործեմ իր նուիրած բառարանները։

Ոչ միայն մեր ընտանիքին, այլ մօրաքրոջս՝ Եղսային մէկ հատիկի տղուն համար ալ հասած էր բարեխօսելու։ 1967-ի պատերազմէն ետք, Եգիպտոսէն Լիբանան փոխադրուած էին։ Արմէնը պէտք էր դպրոց արձանագրուէր։ Այդ օրերուն Վահան Թէքեւան վարժարանը մօտ 1200 աշակերտ ունէր։ Տնօրէն պա-րոն Պապայեանը երբ կ'աւարկէ, թէ դասարանները տեղ չկա, թէ ամէն մէկ դասարան արդէն 42 հոգի եւ աւելի են, Սուկի քեռին կը պնդէ՝ ըսելով. «Եթէ աթոռ դնելու տեղ չկայ, աղբա-մանը ծուռ դարձուր, վրան թող մստի։ Առանց դպրոցի, առանց ուսուցի չենք կրնար ձգել փոքրիկը»։

Թ.Մ.Մ., Ռամկավար, Բարեգործականի լայն շրջանակը, իր բոլոր ղեկավարներով, գիտէին թէ Սուքիասը մեր Սուկի քեռին էր։

Սօրեղբայրս ալ՝ Պետրոս Քեօշկերեան, նոյն շրջանակին մօտիկ էր, բայց սկիզբէն յանձնարարած էր իօրս որ չըլլայ, չըլլա՛յ գիտնան թէ ինք մեր հարազատ մօրեղբայրն է՝ քեռին։ «Ինչո՞ւ»-ն չէինք գիտցած, կռահելու ալ կարիքը չկա։ Սրտերը կարդացողը Աստուած է։

Տարիները սահեցան, անցան։ Անահիտը համալսարան է, Հերմիճէն Դարուհի, ես՝ Չովակիճեան։ Երեքս ալ փայլուն աշա-կերտներ։ Անահիտը՝ գերազանց արդիւնքներով, Հերմիճէն՝ դպրոցին պարուսոյցը։ Բոլոր աշակերտութեան կողմէ ընտրուած դպրոցի ընկերասէր-ծառայասէր աշակերտուհին։ Ես՝ բեմերու վրայ, սամունք, թատրոն, գեղարուեստ։

Հարազատ քեռիս, Պետրոսը, սկսած է Թ.Մ.Մ., Ռամկավար, Հ.Բ.Ը.Մ.-ի կազմակերպած ճաշկերոյթ-պարահանդէսներուն օրուան նախագահը ըլլալ։

Առիթով մը, առ ի շնորհակալութիւն, ամբողջ ղեկավա-րութիւնը Պետրոսին տունն են այցելութեան, ընթրիքի։

Բոլորը անակնկալի գալով, շշմած կը լսեն Պետրոսի «տա-րօրինակ» հարցունը. «Քրոջս զաւակները ինչպէ՞ս են դպրոցին մէջ»։ Վստա՛հ մէկ կողմէ՝ White Horse Whiskey-ին ներգոր-ծութիւնը կայ, միւս կողմէ ալ հպարտութիւն ներշնչող մեր փայլուն աշակերտներ ըլլալը։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՀ ՀԱՐՊՈՅԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱԻԱՐՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՍ - ՀՈՒՆՁՔ 2025

Հայ Կաթողիկէ Ս. Խաչ Հարպոյեան բարձրագոյն վարժա-
րանի սպասուած օրերէն մէկը՝ Աւարտականներու հանդէսը, որ
այս տարի եւս իր ճոխ մթնոլորտով հարստացուց թեմը,
անմոռանալի յիշատակ մը ձգելով աւարտականներուն, ուսու-
ցիչներուն եւ ծնողներուն սրտերուն մէջ:



Երեքշաբթի, 27 Մայիս 2025-ին, Ս. Խաչ եկեղեցւոյ Պետողւ-
եան սրահին մէջ տեղի ունեցաւ Հայ Կաթողիկէ Ս. Խաչ
Հարպոյեան բարձրագոյն վարժարանի 2024-2025 տարեշրջա-
նի աւարտականներու հանդէսը, ներկայութեամբ՝ Լիբանանի
Հայ Կաթողիկէ վարժարաններու Ընդհանուր քարտուղար հայր
Եուսէֆ Նաւրիի, Սուրբ Խաչ եկեղեցւոյ ժողովրդապետ եւ
վարժարանիս հոգեւոր վարիչ հայր Լեւոն Ստեփանի, Հայ
Կաթողիկէ եկեղեցիներու ժողովրդապետներու եւ փոխժո-
ղովրդապետներու, գերապատիւ վարդապետներու, Կաթողիկէ
վարժարաններու տնօրէններու, միութիւններու ներկայացու-
ցիչներու, բարերարներու, բարեկամներու, հիւրերու, վարժա-
րանի տեսչակազմներու եւ ուսուցչակազմներու, ծնողներու եւ
շրջանաւարտներու:

Յայտագիրը, ճշգրտօրէն պատրաստուած եւ բոլոր մանրա-
մասնութիւնները հաշուի առնուած, ընդգրկեց արուեստի եւ
խօսքի ներդաշնակութիւն մը, արտացոլելով վարժարանի
բարձր մակարդակն ու ոգին:

Երաժշտութեան եւ ծափողջոյններու ընկերակցութեամբ 30

աւարտականներ սրահ մուտք գործեցին, որուն յաջորդեցին
Լիբանանի, Հայաստանի եւ Ս. Խաչ Հարպոյեան բարձրագոյն
վարժարանի քայլերգները: Հայերէնով եւ արաբերէնով, աւար-
տականներու եւ տնօրէնութեան անունով բարի գալուստի
խօսք փոխանցեցին Քրիսթէլ Մաքսաճեան եւ Քրիսթէլ Նահա-
պետեան, անմիջապէս ետք Քրիսթէլ Կիւլիզեան «Ծաղկե-
փունջ» մենապարով ելոյթ ունեցաւ: Հայերէն ուղերձով՝ Մերի
Ձիննէթեան, արաբերէն ուղերձով՝ Ռիթա Կեօզիւպէտյութեան եւ
անգլերէն ուղերձով՝ Սերժ Հայրամեան փոխանցեցին իրենց
սրտի խօսքերը: Սթիւ Տէմիրճեան արաբերէն ասմունքով
տաղանդաւոր ներկայացում կատարեց: Ճոխ էր արուեստի
բաժինը իր խմբային արաբերէն ու հայերէն պարերով, յատկա-
պէս բարձր արուեստի կատարողութիւն ունեցան դաշնամուրի
վրայ՝ Կրեկ Սըվաճեան եւ Արտա Մթրդեան, փողի վրայ՝
Նարեկ Ալիեմէգեան, իսկ երգեցողութեամբ՝ Մելիսսա Մահրուք
(նուագի ընկերակցութեամբ՝ վարժարանիս տաղանդաւոր
ուսուցիչ պրն. Ռաֆֆի Տէր Առաքելեանի):

Յուցադրուեցաւ աշակերտներուն պատրաստած տեսերի-
զը, որ կը համառօտէր իրենց 15 տարուան կեանքը վարժա-
րանէն ներս:

Այս տարուան հանդէսին, յատկանշական էր՝ աւարտակա-
ններէն Ալիք Զափարեանի բեմին վրայ գծելու եւ ներկա-
յացնելու ինքնատիպ կատարումը, որ գրաւեց բոլորին
ուշադրութիւնը:

Յայտագրին մէջ, ինչպէս միշտ, յատուկ բաժին ունէին մայ-
րերը, Ծիւա Դանիէլեան եւ Սերժօ Խաչատուրեան մայրերուն
սրտի խօսք մը փոխանցելէ ետք, բոլորը բեմէն իջան պատուե-
լու իրենց մայրերը՝ վարդեր մուկրելով անոնց:

Աւարտականներ Մերի Քէսմէան եւ Անդրանիկ Տէր Եղիայ-
եան դպրոցի վահանը փոխանցեցին 11-րդ դասարանի երկու
աշակերտներու՝ Անժէլինա Գաճոյեանի եւ Էմմանուէլ Ազատ-
եանի, շարունակելու համար վարժարանի գոյերթը, որմէ ետք
Փերլա Աւետիսեան հրաւիրեց վարժարանի մեծաւոր պրն.
Արած Գարատաղլեանը՝ փոխանցելու իր սրտին խօսքը:

Պրն. Արած Գարատաղլեանի ելոյթը յատկանշական էր իր
երկլէզու ներկայացումով: Ան իր պատգամը փոխանցեց եւ
արաբերէն գիրար ամբողջացնող, հակիրճ եւ ամբողջական
մտքերով: Իւրաքանչիւր լեզուի մէջ անդրադարձ կատարուե-

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ 40

Ն	Ա	Պ	Ի	Դ	Հ	Ն	Ա	Ի	Ա	Չ	Ն	Հ	Կ	Ն	Հ	Ա	Ն	Գ	Կ
Ա	Տ	Ա	Կ	Ա	Ի	Ր	Ր	Ա	Կ	Ր	Ե	Ա	Ր	Կ	Ա	Տ	Ի	Ր	Հ
Թ	Ն	Ն	Ա	Կ	Ա	Չ	Ե	Ր	Թ	Տ	Ր	Կ	Կ	Չ	Ո	Ի	Ա	Ր	Թ
Ի	Ո	Ա	Չ	Ա	Ի	Ե	Շ	Տ	Ա	Շ	Կ	Ր	Ի	Ա	Տ	Ա	Ց	Ա	Բ
Ո	Ի	Ք	Կ	Ր	Ե	Ն	Ո	Ք	Ա	Ի	Ի	Ա	Ն	Ա	Ր	Ա	Լ	Ե	Ո
Գ	Ա	Ն	Բ	Ա	Ռ	Ա	Ր	Ա	Ն	Ն	Ր	Տ	Ր	Է	Չ	Տ	Ր	Տ	Յ
Դ	Գ	Ա	Ա	Գ	Ր	Ք	Ի	Դ	Ր	Ե	Ի	Ա	Ն	Ա	Կ	Ր	Ե	Ա	Ն
Կ	Ե	Գ	Ն	Ա	Ի	Տ	Տ	Ե	Տ	Ր	Ր	Դ	Ր	Ն	Կ	Ս	Ի	Կ	Ն
Ե	Ր	Ր	Թ	Ր	Կ	Կ	Ա	Ն	Բ	Ա	Խ	Ա	Ն	Ա	Ա	Կ	Ն	Ր	Ք
Ն	Ա	Գ	Ո	Ո	Ն	Ա	Տ	Ց	Ր	Բ	Կ	Ն	Չ	Կ	Կ	Ե	Ա	Պ	Ա
Ա	Կ	Ա	Ղ	Ի	Ա	Ե	Ր	Ր	Ա	Ի	Ե	Ռ	Ա	Ա	Գ	Ր	Ղ	Ա	Ի
Կ	Ն	Մ	Ն	Ն	Ս	Ե	Հ	Ի	Ո	Բ	Հ	Դ	Ս	Ն	Պ	Ե	Կ	Ա	
Ի	Ա	Փ	Ն	Ա	Ա	Ո	Պ	Դ	Ք	Պ	Ո	Շ	Ա	Ե	Ա	Ա	Գ	Ն	Հ
Ց	Ն	Ռ	Կ	Ե	Ր	Ր	Յ	Ն	Ք	Ր	Ա	Ի	Դ	Տ	Հ	Ր	Դ	Ե	Հ
Ի	Բ	Ա	Ա	Ք	Ե	Ա	Ա	Ց	Ն	Կ	Կ	Կ	Ա	Ն	Ա	Ր	Ե	Գ	Ռ
Կ	Ն	Կ	Ր	Ի	Հ	Կ	Ն	Տ	Է	Ր	Ա	Ս	Ր	Կ	Ր	Մ	Ե	Դ	Ե
Ա	Ա	Ա	Ա	Ր	Ր	Կ	Ր	Ի	Չ	Կ	Գ	Կ	Ա	Ա	Հ	Դ	Ն	Ե	Տ
Տ	Շ	Ե	Գ	Չ	Ի	Ր	Ո	Կ	Չ	Է	Ն	Ս	Կ	Ա	Տ	Ի	Ո	Կ	Ո
Ի	Ի	Ղ	Ի	Ա	Ղ	Դ	Ե	Ր	Ա	Ս	Ա	Ն	Կ	Ա	Ի	Ա	Շ	Ն	Ր
Գ	Ն	Դ	Ր	Բ	Տ	Ա	Ղ	Ա	Ն	Դ	Չ	Ի	Ն	Ա	Դ	Ա	Դ	Ա	Ր

ԲԱԶՐԻՔ
ԲԱՆԹՈՂ
ԲԱՌԱՐԱՆ
ԲԱՐԵՆԻՇ
ԲԱՑԱՏ
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ
ԲՆԱԾԻՆ
ԲՆԱՆԿԱՐ
ԲՈՅՆ

ԳԱՍԹՈ
ԳԱՐՈՒՆ
ԳԵՂԱՆԻ
ԳԵՐԱՆ
ԳԻՏԱԿԻՑ

ԳԻՏԱՐԱՐ
ԳՈՒԹԱՆ
ԳՐԳԱՆՔ

ԴԱԴԱՐ
ԴԱՍԱԿԱՐԳ
ԴԱՏԱՐԿ
ԴԱՏԱՐԿԱՊՈՐՏ
ԴԵՐԱՍԱՆ (2)
ԴԵՐՈՒՍՈՅՑ
ԴԻՊԱՆ
ԴՂԵԱԿ

ԵԴԵՄ

ԵԶԱԿԱՆ
ԵԼԱՐԱՆ
ԵՐԱՍԱՆ
ԵՐԴԻՔ
ԵՐԿԱՆ
ԵՐԿԱՐ
ԵՐԿԻՐ

ԶԱՆԳԱԿ
ԶԱԻԵՇՏ
ԶԵՐԹ
ԶԵՆՔ
ԶԻՆԱԴԱԴԱՐ
ԶԻՆԱՐԱՆ
ԶԻՐԿ

ԶՈՒԱՐԹ
ԶՏԱՐԱՆ (2)
ԶՐԿԱՆՔ

ԿԱՐԻՔ
ԿԵՆԱԿԻՑ
ԿԵՐՊԱՐ
ԿՈՐԻՁ
ԿՈՒՏԱԿ
ԿՍԿԻԾ
ԿՐԿԵՍ
ԿՐԿԻՆ
ԿՐՊԱԿ

ԽԱԴԻՆ ՕՐԵՆՔԸ.

- Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
- Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
- Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:

Պահուած բառը (7 տառով)՝ ԱՐՕՐԻ ԱԿԱՆՋ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ ԹԻՒ 39-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՊԱՐՈՒԹԱՅ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

ՆԱԽԱԲԱՆ

Բարի՜ էք եկած դուք մեր հանդէսին:
Մի՛ կարծէք թէ այս պարզ ժամանց է սին,
Կամ թէ ակամայ մսխում դըրամի,
Որուն պիտի մընայ կըսկիծը լեղի:

Խըրախճանքին հետ, հաւաքոյթը մեր
Կ'ընծայէ ձեզի գործելու բարի
Միջոցը ազնիւ: Ի՞նչն է աւելի
Թէ՛ սրտապարար, թէ՛ հաճոյաբեր
Քան մըլպաստը ձեր գործի մ'ազգօգուտ,
Որ գոյութեամբ մեր հիմն է անկորուստ:

Է՛հ, բարի՜ եկաք, լաւ ուրախութիւն
Մենք կը ցանկանք ձեզ, ուրախութիւն որ
Պիտի չըբերէ երբեք դաճնութիւն,
Եւ սրտերուն ձեր պիտի տայ անդորր:

Թող նուազն հնչէ, բաժակները լի
Հոսին փրփրաղէզ, եւ թող աւելի
Սրտերը խայտան, ժղպիտը ծաղկի:

ԵՐՈՒԱՆԴ ԳԱՐԱԾԵԱՆ
(ԲԱԶԷ)

ԽԱԶԲԱՌ 39

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

- 1) Ս. Հաղորդութիւնը պահելու անօր
- 2) Լման իրաւատւութիւններով օժտուած
- 3) Յաւելում – Կաթ տուող – Չայնակից գիրեր
- 4) Բացուածք – Ածականակերտ մասնիկ – Նուրբ կաշի
- 5) Նորէն, վերստին – Կոհակ (հակ.)
- 6) Արական անուն – Էրզրում նահանգի վարչական կեդրոնը
- 7) Ջրային փոխադրամիջոց – Այբուբենէն – Ներքեւ
- 8) Հարցական դերանուն – Խորհրդածէ՛ – Անծայր՝ յորդոր
- 9) Մահացած ամուսինէն իր այրին ձգուած ինչք
- 10) Ոգեւորութիւն

ՈՒՂԱՅԱՅԵԱՑ

- 1) Կեղծանուն
- 2) Վարպետ, յաջողակ
- 3) Բոսոր – Փայտփոր թռչուն – Իրերայաջորդ տառեր
- 4) Տիղմ – Ստացական ածական – Կափարիչ գոցելու ծեփ (հակ.)
- 5) Հին Կտակարանի մարգարէ – Սկունդ
- 6) Հայաստանի գետերէն – Ծաղիկ մը
- 7) Հանդէս – Հինտու անծանօթի աստուածը – Հաստատական
- 8) Յարաբերական դերանուն – Արեան շրջագայութեան գլխաւոր գործարանը – «Ց»ին դրացիները
- 9) Սատանայ
- 10) Նուրբ վարմունք ունեցող

ԽԱԶԲԱՌ ԹԻՒ 38-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1		Խ	Ա	Ղ	Ա	Ղ	Ա	Ի	Է	Տ
2	Ա		Ս	Ե	Ի	Ա	Ն	Ի		Ո
3	Ր	Է		Կ	Ա	Ն	Ա		Յ	Հ
4	Գ	Ն	Ա		Ն	Ա		Մ	Ա	Մ
5	Ա	Ի	Ն	Ա	Դ		Լ	Ի	Մ	Ա
6	Հ	Մ	Ա	Յ		Կ	Ա	Ն	Ո	Ն
7	Ա	Ր	Կ		Լ	Ա		Ա	Յ	Ո
8	Տ	Ա		Տ	Ա	Ս	Ա		Ր	Ի
9	Ի		Ա	Ն	Ա	Ի	Ր	Ա		Ն
10	Լ	Ե	Ղ	Ա	Պ	Ա	Տ	Ա	Ռ	

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ
(ԱՐԵՂԱՅԱԿԱՆ)
ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՕԾՈՒՄ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ
ՄԷՋ

Մասնագիտացված
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱԳՈՐ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբաթ եւ Կիրակի, 7-8 Յունիս 2025-ին, Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, պիտի կատարուի քահանայական (աբեղայական) կոչման արարողութիւն եւ ձեռնադրութիւն ու օծում:

ձեռնադրիչ
ԳԵՐՇ. Տ. ՏԱՃԱՏ ԵՊՄ. ԱՇԸԳԵԱՆ
(Դիւանապետ Կաթողիկոսարանի)

քահանայ (աբեղայ) պիտի օծուի Դպրեվանքի
աւարտական աշակերտներէն
ԲԱՐՇ. ՎԱՐԴԱՆ ՍՐԿ. ԱՍԱՅԵԱՆ

Կոչման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 7 Յունիսի երեկոյեան ժամը 4:30-ին, իսկ օծումը՝ Կիրակի, 8 Յունիսի առաւօտեան ժամը 9:30-ին:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ
ՀԱՐՊՈՅԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԱՒԱՐՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՍ

Շարունակուած էջ 3-էն

ցաւ տարբեր նրբերանգներու եւ շեշտադրումներու, որոնք միասին կը կազմէին մէկ միասնական եւ խորիմաստ պատգամ հասանելի բոլոր ներկաներուն: Հայերէնով՝ պատուեց հայ դպրոցը՝ իբրեւ ազգապահպանման ամրոց, պատուեց Հայ Կաթողիկէ Պատրիարքարանը յանձին Ն.Ա.Չ.Տ.Տ. Ռաֆայէլ Պետրոս Ի.Ա. Մինասեան Կաթողիկոս Պատրիարքին՝ իբրեւ վարժարանի յենասիւն, պատուեց վարդապետներն ու ուսուցիչները՝ իբրեւ լոյսի փարոսներ եւ անխոնջ ուղեկիցներ, պատուեց ծնողները՝ իբրեւ նուիրեալ անձեր, եւ վերջապէս պատուեց աշակերտները՝ իբրեւ ապագայի կերտիչներ: Արաբերէնով անդրադարձաւ վարժարանի գործունէութեան, յատկապէս՝ յատուկ պարգանքերու բաժանմունքին մէջ Ս. Խաչ Հարպոյեան բարձրագոյն վարժարանի ունեցած դերին եւ տածած նուիրումին: Անդրադարձաւ նաեւ արդի արուեստական բանականութեան զարգացման, եւ, հակառակ անոր, ուսուցիչներուն եւ դպրոցին անփոխարինելի դերին՝ մարդկային արժէքներու պահպանման եւ հոգեւոր զարգացման մէջ, շեշտելով կրթութեան մնայուն կարեւորութիւնը արագ փոփոխութիւններու ենթակուող այս աշխարհին մէջ:



Ապա պրն. Գարատաղեան բեմ հրաւիրեց հայր Եուսէֆն ու հայր Լեւոնը, եւ վկայականաց բաշխումով պաշտօնապէս աւարտեցաւ 2024-2025 տարեշրջանի հունձքին 30 աշակերտ-աշակերտուհիներուն կրթական ճանապարհորդութիւնը մեր դպրոցէն ներս: Վկայականաց բաշխումէն ետք ուսուցման մէջ գերազանց արդիւնքներ արձանագրած երկու աշակերտներ՝ Սերժ Հայրապետեան եւ Քրիսթէլ Նահապետեան ստացան յատուկ վկայագրեր:

Աւարտին, վարժարանի հոգեւոր հովիւ՝ հայր Լեւոն, իր օրհանմքի խօսքը փոխանցեց, յորդորելով աւարտականներուն իրենց ուսումը շարունակելու, քրիստոնէական ու հայկական արժէքներով առաջնորդուելու իրենց կեանքին մէջ: Հանդիսութիւնը փակուեցաւ Տէրունական աղօթքով:

Պաշտօնական հանդէսէն ետք աւարտականները եւ բոլոր ներկաները տեղափոխուեցան դպրոցին բակը, ուր տեղի ունեցաւ կարկանդակի հատում, որմէ ետք Սերժի Թուրքեան ունագով, Սերժ Քիւրքճեան մեներգով, ապա աւարտականներու խմբերգով ստեղծուեցաւ ճոխ, ուրախ ու անմոռանալի մթնոլորտ մը:

ԲԱՆԱԿՅԱՅԻՆ
ՉԱԽՈՂՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 1-էն

րարած էր, թէ սուրիական հողերէն արձակուած հրթիռներ ինկան բռնագրաւեալ Կոլանի բաց տարածութիւններու մէջ, առանց պատճառելու մարդկային կամ միջազգային վնաս: Որպէս հակադարձութիւն, իսրայէլեան հրետանին եւ օդուժը շարք մը դիրքեր հարուածեցին Սուրիոյ հարաւային Տարաա գաւառին մէջ: Հրթիռարձակումը ստանձնեց «Մոհամմատ Տայֆի փաղանգներ» կազմակերպութիւնը, խոստանալով յարձակումները շարունակել, մինչեւ Կազայի դէմ իսրայէլեան պատերազմի դադրեցումը: Յիշեցնենք, որ Մոհամմատ Տայֆ Համասի «Քասսամ» զինեալ թւի նախկին հրամանատարն էր, որ ահաբեկուեցաւ իսրայէլեան ուժերուն ձեռամբ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԾԳՆԱԺԱՄ
ԹԵՆ ԱԻԻԻ ՄԷՋ

Իսրայէլեան խորհրդարանին մէջ նոր ճգնաժամ է: Ծայրայեղ հրեաները զինուորական պարտադիր ծառայութենէն ազատելու վերաբերեալ բանակցութիւններու ծախողութենէն



ետք, կրօնական կուսակցութիւնները կոչ ուղղեցին քաշուելու Պենիաժին Նեթանիահուի կառավարութենէն եւ կազմակերպելու խորհրդարանական արտակարգ ընտրութիւններ: Վարչապետը, իր կարգին, խորհրդարանի Արտաքին եւ անվտանգութեան հարցերու յանձնաժողովէն պահանջեց գումարել միստ մը եւ խափանել ընդդիմութեան ծրագրերը: Ելեւմուտքի նախարարը, իր կարգին, վտանգաւոր համարեց ճգնաժամը եւ ահագանգեց, թէ «Իսրայէլ կը մօտենայ արտակարգ ընտրութիւններու, ինչ որ կը նշանակէ պատերազմի աւարտը կամ պարտութիւն»: Ընդդիմութեան առաջնորդ Եաիր Լափիտ կարծիք յայտնեց, որ Քնէսէթը աւարտած է եւ երեսփոխանները չեն կրնար մեզ մղել մէկ աղէտէն միւսին:

Ազունիէի Հայ Ազգային Բուժարանին Նուիրատուութիւններ	
Ազունիէի Հայ Ազգային Բուժարանին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները Ապրիլ եւ Մայիս 2025-ի ընթացքին:	
- Տիկ. Նազելի Մարտիրոսեան-Սլին Տուպայէն (պատասխարեալի հովանաւորութիւն)	526\$
- Յովակիմ Մահսէրեան	500\$
- Շողիկ Թերզեան Իտ	50\$
- Տեսայի Հաւաթեան - Բուժարանի պտղատու ծառերու 5 անգամ անվճար սրսկում	
- Այնճարի Արեւ ճաշարանի տնօրէնութիւն - Օրուայ ճաշ պատասխարեալներուն եւ պաշտօնէութեան	
- Վերժին Պարոնեանի Իւլաբեր Կանայք - Օրուայ ճաշ պատասխարեալներուն եւ պաշտօնէութեան	
- Սիւլահեան հաստատութիւն - 4 երկվեցեակ սուրճի գաւաթ	
Խնամակալութիւն Ազունիէի Հայ Ազգային Բուժարանի	

ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՈՐ

Պէյրութ (արեւոտ)
Ցերեկը 27/23՝ գիշերը՝ 60% տամուկ

Երեւան (ընդհ. արեւոտ)
Ցերեկը 27/14՝ գիշերը՝ 27% տամուկ

Հալէպ (արեւոտ)
Ցերեկը 37/23՝ գիշերը՝ 15% տամուկ

Դամասկոս (արեւոտ)
Ցերեկը 34/18՝ գիշերը՝ 18% տամուկ

Տուպայ (արեւոտ)
Ցերեկը 37/29՝ գիշերը՝ 42% տամուկ

Լոս Անճելըս (արեւոտ)
Ցերեկը 23/16՝ գիշերը՝ 63% տամուկ

Սիտնի – վաղը (մասամբ ամպամած)
Ցերեկը 18/11՝ գիշերը՝ 63% տամուկ

Մոնթրէալ – վաղը (արեւոտ)
Ցերեկը 15/7՝ գիշերը՝ 73% տամուկ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ԱՅՍՈՐ

5 Յունիս 2025: Տարուան 156-րդ օրն է:
2025-ի աւարտին կը մնայ 209 օր:

Դէպքեր-տօներ
1967 – Վեցօրեայ պատերազմի սկիզբ – Իսրայէլ կազմակերպեց անակնկալ օդային յարձակում մը Եգիպտոսի, Սուրիոյ եւ Յորդանանի վրայ, զաւթելով Երուսաղէմի Հին քաղաքը եւ Կազայի հատուածը:
2014 - «Odyssey Marine Exploration» ընկերութիւնը 1857 թուականին Հարաւային Գարոլինայի մօտ տեղի ունեցած փոթորիկի ժամանակ 21 թոն ոսկի տեղափոխող խորտակուած նաւէն վերագտած է 1,000 օմս ոսկի:
2008 - Թուրքիոյ Սահմանադրական դատարանը չեղեալ յայտարարեց նոր օրէնքը, որ թոյլ կու տար կրօնական պատճառներով գլուխները շարժով ծածկող կանանց յաճախել պետական համալսարաններ:
Շրջակայ միջավայրի համաշխարհային օր – ՄԱԿ-ի հովանիին տակ մշտող համաշխարհային տօն նուիրած բնապահպանութեան իրազեկման:
Ազատագրութեան օր (Մէշէեան կղզիներ) – Տօն մշելու 1977 թուականի յեղափոխութիւնը, որ Մէշէները տարաւ դէպի նոր քաղաքական կարգ:
Ճամայքայի օր – Մշակութային ինքնութեան ու պատմութեան տօն:
Ծառատունկի օր - Նիւ Զելանտայի մէջ շրջակայ միջավայրի խնամքի տօն, ուր քաղաքացիները կը մասնակցին զանգուածային ծառատունկին բնութեան պահպանման ի նպաստ:
Ազատութեան օր, նուիրած ստրկութեան աւարտին եւ մարդկային արժանապատուութեան վերահաստատման Սուրինամի մէջ:

Ծնունդներ
1723 - Ատամ Սմիթ (1723–1790) – Սկոթլանդացի մշակաւոր տնտեսագետ եւ փիլիսոփայ, ժամանակակից տնտեսագիտութեան հիմնադիրներէն մէկը: Իր «Ազգերու հարստութիւնը» աշխատութիւնը կերտեց ազատ շուկայական գաղափարախօսութեան հիմքերը խոր ազդեցութիւն գործելով աշխարհագրական քաղաքականութեան եւ տնտեսութեան վրայ:
1858 - Ալեքսանտր Արեւեան (1858–1940) – Հայ թատերագիր, թատերական գործիչ ու դասախօս: Աշխատակցած է «Մշակ», «Արծազանգ», «Տարազ», «Մուրճ» եւ այլ պարբերականներու:
1907 - Արաքսիա Գիւլգոտեան (1907–1980) – Հայ մեծանուն երգչուհի: Կատարած է հայկական, ասորալեւանական, իրանեան ժողովրդական եւ աշուղական երգեր:
1966 - Սիւվա Եմիթեան – ԽՍՀՄ միջազգային կարգի մարմնամարզի վարպետ եւ ողիմպիական մրցանակակիր (1980): Ջրացատկի հմտութիւններով իր պատանեկութենէն կ'առանձնանայ միջազգային մարզական ասպարէզին մէջ:
1914 - Ֆելիքս Արախանեան (1914–2005) – Հայ երաժշտական քննադատ, գրող, կազմակերպիչ: Լոնտոնի ֆիլիպրոնիկ նուագախումբի խմբավար: «Սանտէ Թայմզ» շաբաթաթերթի երաժշտական քննադատը 41 տարի: Եղած է ֆրանսական դասական երաժշտութեան հետեւողական տարածողը Մեծ Բրիտանիոյ մէջ:
1937 - Գուօ Մանուկեան – Հայ բեմի նուիրեալ դերասան: Իր խաղացանկով մարմնաւորած է բազում ազգային ու համաշխարհային կերպարներ՝ մասնակից ըլլալով հայ թատրոնի ոսկեդարին:
1926 - Փօլ Սորոս (1926–2013) – Հունգարական ծագումով ամերիկացի ճարտարապետ, գիւտարար, բարերար: Քիմիական ճարտարագիտութեան եւ մաշակութիւնային զանգուածային բեռնափոխադրման «Սորոս» ընկերութեան հիմնադիր:

Մահեր
1928 - Հրանդ Ասատուր (1862-1928), հայ բանասէր, գրաքննադատ: Ծնած է Կ. Պոլիս: Իր տիկնոջ՝ Զապէլ Ասատուրի (Սիպիլի) հետ կազմած է լեզուի եւ գրականութեան դասագիրքեր: Կեանքի վերջին տասնամեակին զբաղուած է արեւմտահայ թատրոնի պատմութեամբ:
2004 - Ռանըլտ Ռիկըն (1911-2004), Ամերիկայի Միացեալ Նահանգներու 40-րդ նախագահն է (1981-1989): Երիտասարդ տարիներուն եղած է դերասան եւ նկարահանուած է մօտ 19 ֆիլմի մէջ:
1968 - Վահրամ Փափագեան (1888-1968), մշակաւոր դերասան, գրող, արձակագիր: ԽՍՀՄ գրողներու միութեան անդամ: Խորհրդրային Միութեան ամենալաւ շէքսպիրեան դերասանը:
2022 - Գառնիկ Մեհրապեան (1937-2022), իրանահայ ֆուքպոլիստ եւ մարզիչ:
1826 - Քարլ Մարիա Ֆրիտրիխ Աւուսթ (Երնըսթ) ֆոն Վեպըր (1786-1826), գերմանացի երգահան, խմբավար, դաշնակահար, երաժշտագետ, գերմանական ռոմանթիկ օփերայի հիմնադիր: